https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro

ԽՐՈՆԻԿ ՈՉ ԲԱԿՏԵՐԻԱԼ ՕՍՏԵՈՄԻԵԼԻՏ/ՕՍՏԻՏ (CRMO)

Տարբերակ 2016

3. ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների վրա:

Մինչև ախտորոշման հաստատումը մի քանի ամիսների ընթացքում երեխայի մոտ կարող է առաջանալ ոսկրերի և հոդերի հետ կապված տարբեր խնդիրներ: Խորհուրդ է տրվում հոսպիտալացում ախտորոշիչ հետազոտությունների համար: Ախտորոշումը հաստատելուց հետո խորհուրդ է տրվում նաև կանոնավոր ամբուլատոր այցեր ` հսկողության նպատակով:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին: Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Հնարավոր են որոշակի սահմանափակումներ սպորտային միջոցառումների մասնակցելու համար, հատկապես բիոպսիայից հետո կամ արթրիտների ընթացքում: Սովորաբար, ընդհանուր առմամբ կարիք չկա սահմանափակել ֆիզիկական ակտիվությունը:

3.3 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:

Չկա որևէ յուրահատուկ սննդակարգ:

3.4 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ոչ:

3.5 Կարո՞ղ է երեխան պատվաստվել:
Երեխան կարող է պատվաստվել, բացառությամբ կենդանի պատվաստանյութերով պատվաստումների կորտիկոստերոիդներով, Մետոտրեքսատով կամ ՈՒՆԳ-α-ով բուժում ստանալու ընթացքում:

3.6 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության, հակաբեղմնավորիչների մասին:
CNO-ով հիվանդները ծնելիության հետ խնդիրներ չունեն: Այն դեպքերում, երբ ախտահարվում են կոնքի ոսկրերը, սեռական կյանքում կարող է դիսկոմֆորտ լինել: Հղիության պլանավորման ժամանակ և հղիության ընթացքում դեղորայքային բուժումը անհրաժեշտ է վերանայել: